ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՆՄԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-19/14» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման գնման ընթացակարգի հայտերի գնահատման նիստ

ք. Երևան 23 դեկտեմբերի 2019թ. Ժամը 11:00

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝	Հ. Արչունց
Գնահատող անդամներ (ԳԱ)՝	Շ. Հարությունյան, Թ. Զաքարյան,
Բացող անդամներ (ԲԱ)՝	Հ. Մելիքյան, Ա. Մխիթարյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Լ.Բաղդասարյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գնանշման հարցման գնման ընթացակարգի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին:
3. Հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին:
4. Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:
5. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:
6. Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին:
7. Հայտերի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին
8. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

2. Գնանշման հարցման գնման ընթացակարգի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին:

2.1 Սահմանված ժամկետում գնանշման հարցման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	Մասնակցի անվանումը	Էլ. փոստի հասցե
1	«Մովսեսյան» ՍՊԸ	computerland@mail.ru

3.Հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին:

3.1 Հրավերի պահանջներին համապատասխան հայտ (որոնց Armeps համակարգը դիտել է որպես ներկայացված (պիտանի) հայտեր), կազմել և ներկայացրել է «Մովսեսյան» ՍՊԸ մասնակիցը:

4.Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:

4.1 «Մովսեսյան» ՍՊԸ մասնակիցը կազմել և ներկայացրել է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան փաստաթղթեր, այդ թվում առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը՝ Հավելված 1.1:

5.Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:

5.1 Գնման առարկա է հանդիսանում ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կարիքների համար Պատճենահանող և համակարգչային սարքա–վորումների պահեստամասերի և նյութերի ձեռքբերումը, որը խմբավորված է 19 չափաբաժիններում:

5.2 Պայմանագիրը կատարելու համար հրավերով սահմանված պահանջներին համապատասխան գնահատված մասնակիցը ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը.

Չ/Հ	Գնման առարկայի անվանում	մասնակցի գնայնի առաջարկ			Քանակ	Նախահաշվային գին
	Մասնակցի անվանում	Գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր		
8	SD քարտ 16 GB				2 հատ	8000

	«Մովսեսյան» ՍՊԸ	16500	-	16500		
19	Օպերատիվ հիշողության սարք				2 հատ	46000
	«Մովսեսյան» ՍՊԸ	42 500	-	42500		

Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում է առանց ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման՝ համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի:

6.Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին:

6.1 Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով, համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջների, հանձնաժողովի հայտերի գնահատման նիստը դեկտեմբեր 19-ին կասեցվել է և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակցին էլեկտրոնային ձևով ծանուցել է գների նվազեցման շուրջ բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին՝ դեկտեմբերի 23, ժամը 11:00, ք. Երևան, Կ. Ուլնեցի 68 հասցե: Մասնակցին տրվել է հնարավորություն նվազեցված գնային առաջարկը ներկայացնել էլեկտրոնային տարբերակով:

6.2 Գների նվազեցման շուրջ բանակցության նիստին բավարար գնահատված հայտ ներկայացրած «Մովսեսյան» ՍՊԸ մասնակիցը չի ներկայացրել նվազեցված գնային առաջարկ:

6.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետը N 1-18 չափաբաժինների մասով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

6.4 N 19 չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Մովսեսյան» ՍՊԸ մասնակցին՝ որպես բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից նախապատվություն տալու սկզբունքով:

6.5 «Մովսեսյան» ՍՊԸ մասնակցին ճանաչել ընտրված մասնակից:

6.6 Հաստատել և գնումների էլեկտրոնային տեղեկագրում հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և ընտրված մասնակցի իրական շահառուների մասին տվյալները:

6.7 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն սույն ընթացակարգի հետ կապված անգործության ժամկետ չի սահմանվում:

7. Հայտերի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին:

7.1 Հայտերի վերաբերյալ հարցադրումներ չեն ստացվել:

8. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

8.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 29-րդ կետը՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ պայմանագիրը կնքվելու օրվան հաջորդող օրը Գնահատող հանձնաժողովը համարվում է լուծարված:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝ _____ Հ. Արչունց

Գնահատող անդամներ (ԳԱ)՝ _____ Ե. Հարությունյան

_____ Թ. Զաքարյան

Բացող անդամներ (ԲԱ)՝ _____ Հ. Մելիքյան

_____ Ա. Մխիթարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Լ.Բաղդասարյան